

Արեւն իւր էր դեռ ի յառաօտին,  
Օրհասին սեաւ ամպք ըզնա ծածկեցին:

Մահ նորա բնաւից իւրոց սիրելեաց,  
Սուգ անմընտէր եւ կրակի՞ծ էած,  
Վըշտըմբեր կենաց իւրոց սոսկ վըկայ,  
Կըձեայ մահարձանս աւասիկ աստ կայ:

Ծնեալ ի 1851, ի 20 Մայիսի:

Սոյն Տապանագիրը, որ պատկերիս մէջ ալ  
կը նշմարուի, շարագրած է 1872ին Պետրոս  
Գուրեանի մանուկ եղբայրը Միհրան, այժմ  
Եղիշէ Եպիսկոպոս Գուրեան՝ առաջնորդն եւ վե-  
րատեսուէն Արմաշի Գպրէվանքին:

Շիրմին արեւմտեան ե-  
րեսը, որ մեր պատկերին մէջ  
չ'երեւար, եւ կը նայի Պաղ-  
լար Պաշիկ պողոտային վըայ,  
կը կրէ Պետրոս Գուրեանի  
«Ի՞նչ է» վերնագրով  
ոտանաւորին չորս տողերը,  
որք են՝

Իսկ անըրան եթէ մընայ  
Երկրի մէկ խորն Տողա-  
կոյան իմ,  
Եւ յիշատակս ալ թառամի  
Ա՛՛՛՛, այն ասեն ես կը մեռ-  
նիմ:


Այս տողերն երկու տարի  
յառաջ արձանագրել  
տուաւ Գեոր. Տէր Եղիշէ  
Սրբազան Գուրեան, վերա-  
շինել տալով նաեւ իւր  
վաղամեռիկ Հարազատին  
գամբանը, որ կործանելու  
մօտ վիճակի մը հասած էր:

Ամեն անգամ որ կ'անցնիմ Պաղլար Պա-  
շիէն, չեմ կրնար կանգ չառնուլ վայրկեան մը  
այս շիրմիս հանդէպ, որուն ցուրտ սպիտակու-  
թիւնն ինձ թափանցիկ կը թուի, եւ այդ կար-  
ծեցեալ թափանցիկութեան մէջէն երազի մը պէս  
յանկարծ ընդնշմարել ինձ կը թուի Պետրոս  
Գուրեանի վէս, սէգ, նուրբ հասակը, կամ տես-  
նել անոր վառ ու աղու աչերուն ցոլումը, զոր  
մանկութեանս ակնապիշ զիտել ես կ'ուզէի,  
չգիտեմ սակայն ինչու, երբ Պետրոս մերթ ընդ  
մերթ կու գար մեր տունը:

Այդ ձիւնափայլ շիրմին տակն է, որ կը  
հանգչի ի սպառ Պետրոս Գուրեանի մարմինը,  
հոգ է՝ որ փտեցաւ անոր զգայուն սիրտը, որ

սակայն կենդանի է եւ շատ սրտեր միշտ կը  
տրտիեցընէ, հոգ է՝ որ չորցան հոգ դարձան  
այն մատերը, որք աննման երգեր հիւսեցին եւ  
սիրոց դասեր մեզ շարագրեցին. հոգ է՝ որ իւր  
կեանքին քսաներորդ դարունին մէջ խորշակա-  
հար շուշան ծաղկի պէս թառամեցաւ Պետրոս  
Գուրեան, զոր իւր յուղարկաւորութենէն՝ քանի  
մը ժամ յառաջ կրցայ տեսնել վերջին անգամ  
մըն ալ, եւ պիտի չմոռնամ բնաւ զայն:

Տեսայ զայն այն, եւ քանի՞ դժուարու-  
թեամբ, տղայ էի, տասներեքս նոր կը լինեցնէի,  
Իւսկիւտարի՛նոր-թաղի փողոցներուն մէջ լեցուած  
հո՞՞՞ բազմութիւնը ձեղքելով հազիւ հասայ  
Գուրեանին տունը, տան  
գուրսը ներսը խուռներամ  
սպասող յուղարկաւոր-  
ներու սրունքներն իմ ու-  
սերովս քերելով, սողացի  
ելայ այն սենեակը՝ ուր կը  
հանգչէր Պետրոս եւ ուր՝  
այդ օրն ամբողջ իւսկիւ-  
տարցին ելաւ Գուրեանի  
ճակատը վերջին անգամ  
համբուրելու, անոր խուռնկ  
դէմքը վերջին անգամ մըն  
ալ տեսնելու:



ՄԱՅՐ ԳՈՂԻՐԵԱՆ

Այսօրուան պէս կը յի-  
շեմ եւս անոր դէմքը, մե-  
ռելի դէմք չէր այն, այլ  
հրեշտակի՛ որ կը նիրհէր-  
ցուցամատոս դողդողալով  
դպրուցի անոր, թաց էր եւ  
ունէր ճակտին վըայ, մա-  
ղբուն մէջ, բիբերուն  
ծայրը եւ երեսին վըայ,  
մայրնի ու հայրնի աչ-

քերէ հոսած հո՞՞՞ կայրակներ, որք այնպէս մը կը  
կենային, իբրեւ թէ մարդարապէս պսակ մը  
հոն յօրինէին: Աչքիս առջեւն է դեռ անոր փակ  
աչերը, որք կարծես թէ յանկարծ նորէն բա-  
ցուիլ կ'ուզէին, անոր ճակատը՝ որ հիմայ ոտա-  
նաւոր մը պիտի խորհէր. միտքս ենտակաւին անոր  
վեր վեր սանտրուած սեւ մաղբերը, որք կը փայ-  
լէին, տժգոյն շրթունքները, որք ժպտացոյց դի-  
ծերու մէջ սառած էին, եւ ամբողջ հասակը, որ  
հսկայ նոճի մըն էր կարծես շրջած ու պառկած:

Յաւալի է որ չունինք անոր սիրուն դէմքին  
պատկերը, զոր յիշելու համար հերկք է զիտել

Պետրոս Գուրեանի յուղարկաւորութիւնը կատարուած է 1872 յունուար 21ին: